# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2022թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2022/77**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԴԷԿՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 02.03.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.02.2022թ. թիվ 26/26-1/3002-2022 գրությամբ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 15.02.2022թ. թիվ 02/16.4/1303-2022 գրության հիման վրա, 21.02.2022թ. թիվ 26/26-1/3002-2022 գրությամբ նախաձեռնել է «ԴԷԿՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.**

«ԴԷԿՍ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Դէկս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի նախապատմությունը և փաստերը

«Դէկս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/14» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես Հավելված 1.2-ում /տե՛ս թիվ 2-2 արձանագրություն/:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Դէկս» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1 կետի՝ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Դէկս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Դէկս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/14» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես Հավելված 1.2-ում:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Դէկս» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1 կետի՝ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Դէկս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Դէկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Նախ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 17.01.2022թ. և նույն օրը կազմվել է թիվ 2.1 արձանագրությունը, որով գնահատող հանձնաժողովը որոշել է հայտերի բացման և գնահատման նպատակով հաջորդ նիստը հրավիրել տաս աշխատանքային օրվա ընթացքում /այսինքն մինչև՝ 02.02.2022թ./:

Ծանոթանալով թիվ 2.1 արձանագրությանը՝ գնումների համակարգող Հրաչիկ Ավետիսյանը խնդրել է ՍՊԸ-ի աշխատակիցներին հատկապես ուշադիր լինել 17.01.2022-02.02.2022թ. ընթացքում ստացվելիք էլեկտրոնային ծանուցումներին, քանի որ այդ ընթացքում կատարվելու էր Ընթացակարգով հայտերի գնահատում և եթե

արձանագրվի անհամապատասխանություն, ապա միայն այդ ընթացքում գնահատող հանձնաժողովը պետք էր տրամադրեր շտկման հնարավորություն:

Այնուհետև հաշվի առնելով, որ Ընկերության գնումների համակարգողը պետք է գործուղվեր Արմավիրի մարզ և հաշվի առնելով նաև, որ մինչ 02.02.2022թ. Ընկերությունը տվյալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չէր ստացել որևէ շտկման ծանուցում, «ԴԷկս» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հովհաննիսյանի 02.02.2022թ. գործուղման հրամանի համաձայն /կցվում է/՝ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի աշխատակիցներ Հրաչիկ Ավետիսյանը (գնումների համակարգող) և Թաթուլ Խաչատրյանը (ավագ ճարտարագետ) 2022 թվականի փետրվարի 3-ից մինչև ս.թ. փետրվարի 10-ը՝ ներառյալ, գործուղվել են Արմավիրի մարզ, ք. Արմավիր:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ վերոհիշյալ գործուղման նպատակն էր տվյալ աշխատակիցների կողմից կատարել տեղայնքի զննում և վերջնական հաշվարկ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/19 ծածկագրով գնման ընթացակարգով նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման մրցույթին մասնակցելու համար: Վերոհիշյալ մարզադահլինճները կառուցվելու էին Արմավիրի մարզում:

Եվ հանկարծ, «ԴԷկս» ՍՊԸ-ն անակնկալի է գալիս, երբ ծանոթանում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-4 արձանագրության հետ, որի 1.1 կետի համաձայն՝ «Դէկս» ՍՊԸ-ի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և վերջինիս նույն արձանագրությամբ որոշել են հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է

մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 17.01.2022թ. և նույն օրը կազմվել է թիվ 2.1 արձանագրությունը, որով գնահատող հանձնաժողովը որոշել է հայտերի բացման և գնահատման նպատակով հաջորդ նիստը հրավիրել տաս աշխատանքային օրվա ընթացքում /այսինքն մինչև՝ 02.02.2022թ./:

Ինչպես արդեն նշվել է, «ԴԷկս» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հովհաննիսյանի 02.02.2022թ. գործուղման հրամանի համաձայն՝ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի աշխատակիցներ Հրաչիկ Ավետիսյանը (գնումների համակարգող) և Թաթուլ Խաչատրյանը (ավագ ճարտարագետ) 2022 թվականի փետրվարի 3-ից մինչև ս.թ. փետրվարի 10-ը՝ ներառյալ, գործուղվել են Արմավիրի մարզ, ք. Արմավիր: Վերոհիշյալի արդյունքում «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի աշխատակից Հրաչիկ Ավետիսյանը (գնումների համակարգողը) չի գտնվել աշխատանքի վայրում, քանի որ ունեցել է լեգետիմ ակնկալիք, որ եթե մինչև 02.02.2022թ. ներառյալ վերոհիշյալ Ընթացակարգի շրջանակներում չի ստացվել շտկման ծանուցում, ուստի ՍՊԸ-ի ներկայացրած հայտում անհամապատասխանություններ չեն հայտնաբերբել:

Այս պարագայում գտնում ենք, որ Ընկերությունից ոչ կախված հանգամանքը հանգեցրել է ոչ միայն «Դէկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելուն, այլ նաև մեծ աշխատանքային փորձ ունեցող ընկերությունը այսօր կանգնել է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակումում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Դէկս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«ԴԷԿՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/77 ընթացակարգի շրջանակներում 04.03.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.02.2022թ. թիվ 02/16.4/1303-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 7-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/14 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԴԷԿՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Ընկերության կողմից խախտվել է Կարգի 42-րդ և հրավերի 8.10 կետերով սահմանված պայմանները, ինչի հիման վրա հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերությունների տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/77 ընթացակարգի շրջանակներում 04.03.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2022/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/14» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի հայտերը բացվել են 2022 թվականի հունվարի 17-ին ժամը 12:00-ին և որոշում կայացրել ներկայացրած հայտերն ուսումնասիրելու նպատակով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել սույն ամսաթվից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2022թ. նիստի թիվ 2.2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների հայտերը, արձանագրել է, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված Հավելված 1.2-ում առկա է անհամապատասխանություններ, այն է՝

ա) 12-42 տողերով մոդելի փոխարեն ներկայացված է սերիա /համարանիշ/, ինչի արդյունքում հնարավոր չէ գնահատել համապատասխանությունը հրավերի պահանջներին,

բ) 1-11 տողերով ներկայացված չեն մոդելի տեխնիկական բնութագրերը և նման արտադրող հնարավոր չի եղել գտնել՝ համացանցում տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված,

գ) ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի բավարարում հրավերի պահանջներին հետևյալ տողերում՝ 57,

դ) 63-րդ տողով ներկայացված մոդելը ր ներկայացված արտադրողը իրար չեն համապատասխանում,

ե) ներկայացված չեն մոդելներ հետևյալ տողերում՝ 59, 61-62, իսկ 59-րդ տողի տեխնիկական բնութագիրը սխալ է լրացված:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով (մինչև 04.02.2022թ. ներառյալ) կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 03.02.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.02.2022թ. թիվ 26/26-1/3002-2022 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 15.02.2022թ. թիվ 02/16.4/1303-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/14» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի հայտերը բացվել են 2022 թվականի հունվարի 17-ին ժամը 12:00-ին և որոշում կայացրել ներկայացրած հայտերն ուսումնասիրելու նպատակով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել սույն ամսաթվից հաշված մինչև տասն աշխատանքային օրվ ընթացքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2022թ. նիստի թիվ 2.2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների հայտերը, արձանագրել է, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված Հավելված 1.2-ում առկա է անհամապատասխանություններ, այն է՝

ա) 12-42 տողերով մոդելի փոխարեն ներկայացված է սերիա /համարանիշ/, ինչի արդյունքում հնարավոր չէ գնահատել համապատասխանությունը հրավերի պահանջներին,

բ) 1-11 տողերով ներկայացված չեն մոդելի տեխնիկական բնութագրերը և նման արտադրող հնարավոր չի եղել գտնել՝ համացանցում տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված,

գ) ներկայացված մոդելը տեխնիկական բնութագրով չի բավարարում հրավերի պահանջներին հետևյալ տողերում՝ 57,

դ) 63-րդ տողով ներկայացված մոդելը ր ներկայացված արտադրողը իրար չեն համապատասխանում,

ե) ներկայացված չեն մոդելներ հետևյալ տողերում՝ 59, 61-62, իսկ 59-րդ տողի տեխնիկական բնութագիրը սխալ է լրացված:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով (մինչև 04.02.2022թ. ներառյալ) կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 03.02.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 17.01.2022թ. և նույն օրը կազմվել է թիվ 2.1 արձանագրությունը, որով գնահատող հանձնաժողովը որոշել է հայտերի բացման և գնահատման նպատակով հաջորդ նիստը հրավիրել տաս աշխատանքային օրվա ընթացքում /այսինքն մինչև՝ 02.02.2022թ./:

Ծանոթանալով թիվ 2.1 արձանագրությանը՝ գնումների համակարգող Հրաչիկ Ավետիսյանը խնդրել է ՍՊԸ-ի աշխատակիցներին հատկապես ուշադիր լինել 17.01.2022-02.02.2022թ. ընթացքում ստացվելիք էլեկտրոնային ծանուցումներին, քանի որ այդ ընթացքում կատարվելու էր Ընթացակարգով հայտերի գնահատում և եթե արձանագրվի անհամապատասխանություն, ապա միայն այդ ընթացքում գնահատող հանձնաժողովը պետք էր տրամադրեր շտկման հնարավորություն:

Այնուհետև հաշվի առնելով, որ Ընկերության գնումների համակարգողը պետք է գործուղվեր Արմավիրի մարզ և հաշվի առնելով նաև, որ մինչ 02.02.2022թ. Ընկերությունը տվյալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չէր ստացել որևէ շտկման ծանուցում, «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Հովհաննիսյանի 02.02.2022թ. գործուղման հրամանի համաձայն /կցվում է/՝ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի աշխատակիցներ Հրաչիկ Ավետիսյանը (գնումների համակարգող) և Թաթուլ Խաչատրյանը (ավագ ճարտարագետ) 2022 թվականի փետրվարի 3-ից մինչև ս.թ. փետրվարի 10-ը՝ ներառյալ, գործուղվել են Արմավիրի մարզ, ք. Արմավիր:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ վերոհիշյալ գործուղման նպատակն էր տվյալ աշխատակիցների կողմից կատարել տեղանքի զննում և վերջնական հաշվարկ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀՔԿ-

ԲՄԱՇՁԲ-21/19 ծածկագրով գնման ընթացակարգով նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքների ձեռքբերման մրցույթին մասնակցելու համար: Վերոհիշյալ մարզադահլինճները կառուցվելու էին Արմավիրի մարզում:

Եվ հանկարծ, «ԴԷԿՍ» ՍՊԸ-ն անակնկալի է գալիս, երբ ծանոթանում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-4 արձանագրության հետ, որի 1.1 կետի համաձայն՝ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և վերջինիս նույն արձանագրությամբ որոշել են հայտը գնահատել անբավարար և մերժել»:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների և Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման և «ԴԷԿՍ» ՍՊԸ-ի աշխատակիցներին 2022 թվականի փետրվարի 3-ից մինչև ս.թ. փետրվարի 10-ը ներառյալ, Արմավիրի մարզ ք. Արմավիր գործուղելու մասին 02.02.2022թ. հրամանի ուսումնասիրության արդյունքում, հարկ եմ համարում արձանագրել, որ ***Ընթացակարգի հայտերի բացումը թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ տեղի է ունեցել 17.01.2022թ. և նույն արձանագրության համաձայն գնահատող հանձնաժողովն որոշում է կայացրել հայտերի բացման և գնահատման նպատակով հաջորդ նիստը հրավիրել տաս աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ 01.02.2022թ. ներառյալ,*** մինչդեռ՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2.2 արձանագրության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտի գնահատումն իրականացրել է 03.02.2022թ.-ին և նույն օրն էլ ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

***<u>Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:</u>***

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում

գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատումը 01.02.2022թ. ներառյալ չիրականացնելու արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.02.2022թ. թիվ 26/26-1/3002-2022 գրությամբ «ԴԷԿՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**